



ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
ՄԻՍՏԵԱԼ ԼԱՆՍՆԳՍՑ ՀԱՄԱՐ  
ՏԼ. ՍԲ. 1 50  
Տարեկան 75  
Վեցամսեայ 40  
Նամամսայ 40  
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ  
Տարեկան 10 ֆրանք.  
Բաժանորդագրին կԱՆՈՒԿ ՎՃԱՐԵԼԻ

ՀԱՍՏԵ  
To the DICKRIS PUBLISHING CO  
301 East 34th St., New York City  
Entered at the Post Office at New York as  
Second-Class Mail Matter.

# ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 79      ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 13 1899      ԳԻՆ 3 ՍԷՆԹ

## ԲՈՎԱՆԻՆԻ ԿՈՒՅՈՒՄԻՆ

Ռուսական հարձակումները — Ազգային քրոնիկ. — Նամակ Ուսթըրէն. — Նամակ Ֆոլ Բիվերէն. — Ներքին լուրեր. — Քաղաքական. — Այլ և այլ. — Բանասիրական. Ռուսիա և Հայերը (Կովկասի կառավարչական կոլեգիան իշխանին տեղեկագիրը Ձարին ուղղուած) :

## ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՐՆԵՐ

Ճգնաժամի օրեր են։ Որոտրդներն աղեղ կը լարեն, հարուածը կ'իջնայ ու նոր վէրք մըն ալ կը բացուի։ Մեր կեանքի թշնամիները շատ են, վէրքերն ալ շատ։ Իսկ կրող, տակաջող ու բժիշկ մենք ենք ու մենք միայն պիտի կրենք և մենք միայն է միշտ օտար» երգեց նահատակ բանաստեղծը։ Ինքն ալ կրկնեցինք իր երգը, բայց շարունակ հուսատացինք օտարին և սպասեցինք որ օտարը պիտի գար բժշկելու մեր վէրքերը։ Սխալ էր այդ և մենք սուսեցինք։ Ինքնուրոյն ճիգ, զիտակցութիւն ու ազգային անվհատ յոյսն է որ պիտի կրնայ մեզ առողջացնել։ Ժողովրդի մը անաղարտ հուսաբեր գանձի գիւղացին կը դարձնէ, իսկ գիւղացին հիւանդ չի բուսիր։

Գտնել իրականութիւն մըն է, բայց ի՞նչ ընենք, երբ ժամանակները մեզ ծանր հիւանդ դարձուցին։ Միշտ օրեր են, բայց հուսատանք որ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՌՈՒՍԻԱ ԵՒ ՀԱՅԵՐԸ

«Թոյմզ» իր Ապրիլ 5ի և 11ի թիւերուն մէջ հրատարակած է բովանդակութիւն պաշտօնական տեղեկագիր մը, զոր կովկասի կառավարչական կոլեգիան իշխանը անցեալ տարի (1898 թ գարնան) ներկայացուցած էր Ձարին։ Այս կարեոր պաշտօնագրի հրատարակութիւնը իրարանցում մը յառաջ բերած է Բեդերպուրկի պալատին մէջ և ամբողջ Արտասահմանի մամուլի ուղարկութիւնը գերաւած է։ Նիւ Եորքի թերթերն ալ այդ մասին խմբագրականներ հրատարակած են։

Կ. Պօլսի «Արևիկ» լրագիրը թայմզէն առնելով տեղեկագրի բովանդակութիւնը հրատարակած է, որմէ քաղելով հոս կը վետեղենք տեղեկագրի կարեոր մի մասը, և մեր սիրահանները սուսեցնեն պատճառաւ մնացեալը յաջորդ անգամուան կը թողունք՝ մեր տեսութիւններով հանդերձ հրատարակելու։

հետուն արշալոյսի արեգակ մը կայ։ Այսօր այս սուղի, սուգի, հաւածանքի օրերին մէջ, մեր ցաւերին գիտակից ըլլալը, դէպի կազդուում մը քայլ մը առնել ընել է։

Օրուայ յազրէն ու հրատապ հարցերի շարքին Ռուսիայէն նոր լուրեր կը հասնին, լուրեր՝ որոնք կորուստներ կը գուժեն։ «Մի պետութիւն, մի ազգ, մի լեզու, — Ռուս և ռուսերէն, մի Տէր, մի Աստուած, — Ձարը...» Ռուսի դաւանանքը, Ռուս մուսիկին հանգանակը, բարբարոս ու խաւար վճիռ մը, որի իրագործմանը շարունակ ձգտած են հասնել ծովահէնները սերունդ մոսքովները։ Մինչ նիքօյա Բ. սակի խօսքերով խաղաղութեան հրաւեր կը կարգայ աշխարհին և ձեռքը սրային վրայ դրած՝ պարծնօք մը կ'ըսէ։ «Նա ելըն ո՛չ արկանել խաղաղութիւն, այլ սուր, ևս միահեծան տէր Ռուսիոյ՝ եկի արկանել խաղաղութիւն», և իւր միտքերով խաղաղութեան այս նոր մեծիւնը դէմ, անդին՝ սուր ու հաւածանք, դարձանք մը կը բուրեն իւր ընդարձակած աւազակ մեքին տակէն։ 27 թաթարներ մի օրուան մէջ կախաղան կը բարձրանան, կը ջարդուին, Սիւպի կը քուրին, Ֆինլանտիայէն կը յափշտակուին՝ իր իսկ ձեռքերով ստորագրուած առանձնաշնորհման իրաւունքները։ ամբողջ Ֆինլանտիայի ձայնը արդար բողբոքակունք կը վառուին Ձարին պալատէն։ «Գը-

## ԿՈՎԿԱՍԻ ԿՈՒՅՈՒՄԻՆ

### ԿՈՒՅՈՒՄԻՆ ԻՇԽԱՆԻՆ ՏԵՂԵԿԱԳՐԻ ԶԱՐԻՆ ՈՒՂՂՈՒՄԸ

Կոլեգիան իշխան, իր տեղեկագրին մէջ, կարգ մը ամբաստանութիւններ կընէ կովկասի Հայերուն նկատմամբ, մասնաւորապէս գարգացած դասին և կղերին վերագրելով զանազան ձգտումներ։ Կընէ թէ անոնց բոլոր գործունէութեան նպատակն է Կովկասի Կոնստանտինոպոլիսի ձեռք բերել հանրային կեանքի ամեն շրջանակներուն մէջ, և շահագործել երկրին ժողովուրդը՝ առևտրական դասակարգին միջոցաւ։ «Այս վիճակը, կ'ըսէ կոլեգիան իշխանը, պարտք կը դնէ բարձրագոյն իշխանութեանց վրայ՝ ի պատիւ ռուսական վարչութեան՝ հաստատել իրաց աւելի արդար և կանոնաւոր վիճակ մը, պահպանելու համար ժողովուրդին մնացեալ մասը Հայոց այս շահագործիչ ձգտումներէն և քննադատ միտումներէն։»

## ԿՈՒՅՈՒՄԻՆ ԵՒ ԵՄՄԻՍԿՆԱՑ ՍԻՆՈՒՐԸ

Տեղեկագրի կը շարունակէ սպասելու։ Անցած սեպտեմբերին, այցելութեան գացի էլ միտման՝ Հայոց կաթողիկոսին, որ նոյն տարուայ զեկտեմբ-

նացէ՛ք և հնազանդեցէ՛ք, եթէ չէք ուզեր որ ՌԻՐԻՇ միջոցի դիմեմ»։ Ուսանողական թարմ ոյժեր չեն կըրնար տանիլ բռնութեան, կ'ապըստամբին, կը հեռանան՝ ուսանողին սիրելի համալսարանական ակումբէն և այսօր հազարաւոր ուսանողներ Բեդերպուրկի նեոկիրի սարայատակներ կը շփեն՝ մերժելով ուսներս կրթել այն համալսարաններէն, ուր սարկանալ և ապա բռնաւ կը սովորեցուի իրենց։ Ռուսի բերան «Նովոյէ Վրէմի» — խաւարապաշտ Սովորիի օրկանը — «Թո՛ղ գնան, կորսուին, մենք ուսանողութեան սէտք չունինք» կը պատասխանէ ուսանողներին այս արդար ու գործնական բողբոքին։

Նոյն կրակով կը վառուին մեր ազգակիցները և ռուսական վայրագ կրակը օր օրին կ'այրէ մեր մէն մի սուրբ հաստատութիւնը, դպրոց, ընկերութիւն, լեզու, եկեղեցի և օր մըն ալ պիտի խլէ սիրաք և ընէ։ «Հաւատացէ՛ք և խոստովանեցէ՛ք որ դուք Ռուս էք. Հայը մեռաւ հոս՝ առանց հոգեվարքի, իսկ հոս՝ ջարդելու ուսուցիչն ալ մամուլով միայն գոհ պիտի ըլլայ Հայէն և Կոլեգիաներն ալ չեն գրեր»։ Հայեր ապերախտ են դէպի մեզ, ազգային ձգտումներ ունին, կաթողիկոս կը կարծէ որ ինքը ԲԱՆ ՄԸՆ է» և պիտի աւելցունեն, «Այժմ կեցցէ այս ազգը, որ այլևս գոյութիւն չունի» և վեհափառ Ձարն ալ իւր արջի թաթիւով՝ ուրախութեան արատաւ աչքերին՝ խոշոր առաւելով պիտի մակագրէ ԱՆՇՈՒՇՏ։

բերին մէջ փոխադարձ այցելութեան եկաւ ինծի թիֆլիզ. այս երկու առիթներով իրեն հետ ունեցած տեսակցութիւններս համոզեցին զիս թէ կաթողիկոսը, իր ձեռնութեան պատճառաւ, պէտք եղածին շափ անկասորէն շէր դատեր, և կը գտնուէր իր այն կղերական խորհրդատուներուն ազդեցութեանը տակ, որոնք իրենց անձնական նպատակներն ունին (1)։ ասոնք խորհուրդ կուտան կաթողիկոսին՝ շահակերպիւ մեր օրէնքներուն և օրէնքէն գերադասել իր կրօնական հեղինակութիւնը։ այսպէս, կաթողիկոսը կը մղուի բռնել ընթացք մը, որ համաձայն չէ կառավարութեան տեսութեանց (2)։ Բացատրեցի հակառակորդները։

(1) Այսպէս կ'ըսեն և Հայրիկին հակառակորդները։  
(2) Այժմ պարզ է թէ վեհ. Հայրիկ անչարժ ու անգործ համակերպող մը չէ եղեր ռուսական անարդար ձգտումներուն, ընդհակառակ՝ զօրաւոր մաքառումներով ընդիմացել է միայն թէ՛ ամեն բան շէր կրնար անմիջապէս հրապարակի վրայ երբեք, որ մեր կուրացածներն ալ տեսնային։ Այժմ ի՞նչ պատասխան կուտան արդեօք այնպիսիները, որոնք հետեւ հետեւ նստած թղթի երեսներ կը մրտեն՝ Հայրիկը գատափեանով։  
ՍՄԲ.

Մեր ազգային պատմութեան մէջ շարունակ կարծես քաղաքական նոյն սխալն կրկնելու հաճոյքն ունեցած ենք, միշտ մեր տկար և նոյն իսկ զօրաւոր օրերին՝ սակի յայտնով աչքերնիս դարձուցած ենք դէպի դըրացի Գրիտոնեան և Հայի քրիտոնեական օտարասիրութեամբ վստահացած ենք օտարին և միշտ ալ տուժած ենք։ Կը լքէինք ու կը դաւաճանէինք մեր դրացի, համացեղ Պարսիկին, աչքերնիս միշտ նենգ Բիւզանդիոն կը դարձնէինք։ Օր մըն ալ Բիւզանդիոն եկաւ մեր արևն թափեց մեր դրան առաջ, գրուեց մեր առն, մեր Անին, իսկ մեր վերջին արքան Անարգարայի պարսպանէն կախեց։ Նոյն ըրաւ և Ռուսը։

Օրինները չ'մոռնանք և պաշտելի Աշտարակեցի յիշենք։ Լազարեաններ, Լօրիս Մէլիքովներ, Տէր Ղուկասովներ և մենք Հայերս էինք որ այդ լուծը — որպէս քաղաք լուծ մը — բերինք ու մեր վրէն գրինք, կովկաս ու Արարատ քաղաքներն ու ճիւղն էր որ կը բարձրացնէր Ռուսական դրոշակը, Հիւսիսի դեղին գիւնուրները հոն գործ մը չկատարեցին, և այս օր այդ ազգը՝ ապերախտ է, որովհետև Ձի ՁՈՒՂՈՒՄԻՆ, որովհետև ազգային զգացում ունի և որովհետև ձարերը իրենց ստորագրած խոստումները դրժած են և Հայերը զայդ գիտեն։

## Այսօր ՏԻԳՐԻՍԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Նորին Սրբութեան թէ էլ միաժամայ Սրբունդին իրաւասութեան պատկանող խնդիրներուն մէջ իր սուած անձնական հրամանները կրնային մեծ չփութութիւններ առաջ բերել իր հօտին առանին գործերուն և սեփականութեան մէջ, և ի վեր հանեցի սա կէտը թէ՛ հարկէ որ համակերպեցէ իր հրահանգները օրէնքին պահանջումներուն։

«Պնդրին ուսումնասիրութեան ետքը, համոզուած եմ թէ կաթողիկոսին խորհրդատուներուն այն ձգտումը, որով կը փափաքին պետական հեղինակութեանց ազդեցութեան շրջանակէն դուրս դիւրք մը տալ անոր, ժողովուրդին մտքին մէջ պիտի մտցնէ սա սխալ գաղափարը թէ՛ կաթողիկոսը բացառիկ զիրք մը կը գրաւէ. և սեփական հետեանք պիտի ունենայ տգէտ միտքերու մէջ ծընունդ տալու այն համոզման թէ՛ կաթողիկոսը Հայ Եկեղեցու հոգևոր պետը ըլլալէ աւելի ԲԱՆ ՄԸՆ է։

«Իմ կարծիքս է հետեւաբար որ Ռուս կառավարութիւնը պէտք է ազդու կերպով պնդէ թէ՛ կաթողիկոսը և էլ միաժամայ Սրբունդը պարտական են կէտ առ կէտ գործադրել օրէնքը։» — Տեղեկագրին այս մասին ջող

նոր բաժնին մէջ կը հրատարակենք իշխան կօլիցէնի տեղեկագիրը, որ «Թայմզ» հրատարակած է՝ ռուսական դաղտնիքները դուրս հանելով, (թէ և մեզ համար նորութիւն մը չէ՝ կոյրեր միայն չը գիտնալ կը կեղծեն) խճրճելով ուրիշ վեհ անձնաւորութիւնները, ) մեծ իրարանցում յառաջ բերած է Ձմեռային պալատին մէջ:

Սոյն տեղեկագրի պահանջները կը գործադրուին հետզհետէ: Իշխան կօլիցէն արդէն լիազօր իրաւունքներ ստացած է կողմասի մէջ: Մեր դպրոցները փակուեցան, մեր մասաղ սերունդը պիտի սովորէ ռուսերէն, պիտի խօսէ ռուսերէն, մըտած է ռուսերէն եւ օր մըն ալ աղօթէ ռուսերէն: «Արձագանք» խափանուեցաւ, որովհետեւ գրած էր թէ՛ ինչո՞ւ ռուս ուսուցիչ մը ատելութիւն կը սերմանէ Հայ ու Ռուս ուսանողներին մէջ (ինչ մեծ յանցանք): Այժմ ալ Թիֆլիզէն վերջին լուր կը հասնի, տեղեկագրի այն մասը՝ որ կը շեշտէ բարեգործական ընկերութեան մասին, իրագործուած է: Բարեգործական ընկերութիւնը, որ ապաւէն մըն էր աղքատ ուսանողներին, խեղճ անկարներն ու թշուառ գաղթականներին, այսօր լուծուած է: Ընկերութեան իւրաքանչիւր մասնաճիւղը, զուտ տեղական պիտի մնայ, իրենց նպատակ պիտի ըլլայ միայն աղքատներին օգնել, առանց ազգային խտրութեան. ընկերութեան ժողովներն ու արձանագրութեանց լեզուն պիտի ըլլայ ռուսերէն (?!) եւ օր մըն ալ պիտի լուծուի ռուս բարեգործական ընկերութեան մը մէջ: Բայց երբ են ասոնք դէպի ռուսացումը, և Ռուսիա անոստ միջոցներով կը դիմէ դէպի իւր շար նըպատակը. ո՞վ կարող է արգելել զինքը: Եւր լեհաստան մը կը դառնայ կողմադր. պատմական նոյն երեւոյթներն կրկնութիւն մըն է, բայց լեհացին ազգային տոկոսութիւն մը ցոյց տուաւ: Արդե՞օք մենք պիտի կրնանք դիմանալ: Վ. ՇԱՀԷՆ:

Ծարք մականգրած է. «ԱՆՇՈՒՇՏ»: «Իբրև ազգարարութիւն մը, եւ որպէս զի էջմիածնայ Սինոդին մէջ անկանոնութեանց առաջը առնեմ, — կը շարունակէ կօլիցին իշխան, — պատուիրցի որ պաշտօնանկ ըլլան Սինոդի անդամներէն երկու վարդապետներ, որոնց անունն է վահան Տէր Գրիգորեանց և նահապետ նահապետեանց. այս երկուքը՝ անձնական քարտուղար կաթողիկոսին: Սորհուրդ տուի որ անոնք դուրս հանուին կողմասի սահմաններէն, և Ձեր վեհափառութիւնը վաւերացուց այս անօրինութիւնը վերջին նոյնմբեր 12 ին: (1):

ՀԱՅ ԾՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ  
«Կողմասի հայ ծխական դպրոցներուն կրթական նախարարութեան յանձնուիլը՝ ըստ Ձեր վեհափառութեան 1897 յունիս 14ի հրամանագրին՝ վերջին ծայր կարևոր է իբր միջոց մը պաշտպանելու նոր սերունդը հայ կղերին փաստաբար ազգեցութեան դէմ: Այս հայ կրօնաւորները շուրջին համակերպիլ նոր կանոններուն: Հետեւաբար, կողմասի բարձ-

(1) Այս վարդապետներն այժմ աքսոր կը գտնուին Ռուստովի մէջ: ՍՄԲ.

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ք. Բ. Ո. Ն. Ի. Կ.

ՎԵՉ. ՀԱՅՐԻԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ալեգարդ վեհ. Հայրիկը, որ այս ձմեռ Թիֆլիզ եկած էր՝ կողմասի կառավարչապետ իշխան կօլիցէնի հետ անսուբուտ եւ Հայոց դպրոցական գոյքերի գրաւման մասին կարգադրութիւն մը ընելու համար, և ինչպէս կարծիք կար՝ մտադրութիւն ունէր Բեքերպուրկ երթալու և Ձարին ներկայանալու, այժմ Թիֆլիզէն մեզ կը հաղորդեն որ մեկնած է անկէ Սանահնի վանք եւ ապա էջմիածին:

ՍԱՌՆ ԺՈՂՈՎԸ ՅՈՒՍԱՀԱՏԱՎ ԿԸ ՀՐԱՅՄԱՐԻ

«Արմէնիա»-ի մէջ կը կարգանք Հայերի պատրիարքարանի Սառն ժողովը որի, երկամեայ պաշտօնավարութեան շրջանը կը լրանայ առաջիկայ մայիս 1ին, երէկ իր հրատարական տուաւ, մէկ կողմէ դժգոհութեան ձայներէն նեղացած և միւս կողմէ ալ՝ Հայերի վիճակը բարւոյցելու համար երկու տարիէ ի վեր իր ըրած բոլոր պահանջներին կառավարութեան կողմէ մերժուիլը տեսնելով յուսահատած:

Սառն ժողովը նկատելով որ բարոյական պատասխանատուութիւն մը ունի ազգին առջև, առ այժմ իր աշխատանքը շարունակելէ ետ չկենար: Իր հրատարական մեծ իրարանցում պատճառած է պատրիարքարանին մէջ, վասն զի Սուլթանը չի համաձայնիր Ազգային երեսփոխանական ժողովը գումարել տալու որ նոր վարութիւն ընտրուի. ասոր համար Օրմանեան պատրիարքն ինքն ալ հրատարական պիտի տայ և հայկական խնդիրը նորէն պիտի բացուի:

ՋԵՅԹՈՒՆ

Ջէյթունէն պատրիարքարան եկած գրութիւն մը կ'իմացունէ թէ մարտ 10—22ի երեկոյին Ջէյթունի վանքին մէջ հրդեհ ծագելով՝ մէկ մասն այրեր է:

ՎԱՆ

Վանէն ստացուած վերջին նամակներն ու լուրերը շատ աղելաբար են, սովը իւր ճիրաններ կը տարածէ անխնայ կերպով. կին մը ինքզինք կախած է իւր նօթի որդոց ձեռք:

Բազոյն իշխանութեան հրամանով, 1896 տարուին մէջ և 1897ի սկիզբը, ՓԱԿՈՒԵՑԱՆ 320 ՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐ. 31 դպրոց միայն բաց մնաց, որոնցմէ ոմանք ալ ետքէն փակուեցան կամ ուսուցիչներուն անձեռնհասութեան հետեանքով և կամ անոր համար որ կղերը կաթողիկոսին տուած հրահանգներուն համաձայն գործելով, չուզեց տալ այդ դպրոցներուն պահպանման համար հարկ եղած դրամը:

Իրաւ է որ 1897ի յունիս 4ի կայս. հրամանագրին մէջ բան մը ըսուած չէր հայ ծխական վարժարաններու սեփականութեանց փոխանցման մասին, բայց այս կէտը լռելիայն կ'իմացուէր, ըստ որում բացուելիք նոր դպրոցները անօգուտ պիտի ըլլային՝ առանց անոնց պահպանման համար հարկ եղած միջոցներուն. հետեւաբար Ձեր վեհափառութեան վաւերացումը խնդրեցի՝ փոխանցելու համար փակուած այդ դպրոցներուն սեփականութիւնները կրթական նախարարութեան, և կ'սպասեմ նոր հրամանին: — Տեղեկագրի այս մասին վերայ Նիքոլայ Բ. կայսրը հետեւեալ ծանօթագրութիւն եւելցուցած է. «ԱՅՏՊԵՍ ՊԵՏՐ Է ԳՐՈՐԾԵՆ»:

«Թայմզ» այստեղ կը բացատրէ թէ ինչպէ՞ս Անդրկովկասի մէջ Հայ

կտոր մը հաց տալ չը կրնալով և անոնց արտասուքներուն չը դիմանալով: Ուրիշ մայր մըն ալ մինչ դրացիի տունները կը դիմէ հաց մուրալու իւր որդւոց, քաղցած մանկիկները թունիրէն մոխիր ուտելով կը մեռնին: Յորենի գիւնը որ մինչև 100 շրջի հասած էր, մարտ 23ին գրուած նամակէ մը կ'իմանանք որ իջած է, Հայտարանցի Հիւսէյին քիւրա փաշան Արմէնիէն 10—12 նաւ ցորեն վան դրուած ըլլալուն համար. և այդ փաշան այնքան ցորեն ունի եղբր, որ կրնայ մի տարի ամբողջ 40,000 ժողովուրդ կերակրել (?): Մինչ քիւրա մը, որի արեւարտու գազան մը ըլլան յայտնի է, կարեկից կը գտնուի վանին, հոս՝ ըսողներ եղած են թէ՛ քանի որ շատ մը տեղերէ օգնութիւն կը հասնի վան, մեր օգնելը աւելորդ է. այդպէս առարկողներու մէջ ազգային զգացումը մեռած է, վասպուրական հարիւր հազարներով սովատանջ է, ամեն հայ պարտք մ'ունի կասարելու:

—Վանի այցելու հովիւ Գեր. Ներսէս եպիսկոպոս Առանտան Ապրիլ 17 ին 4. Պօլսէն մեկնելու է դէպի իր նոր պաշտօնավայր, իրեն ուղեկից ունենալով վահրիճ վրդ. Շահաւան:

—Մանչէսթրի հայ վաճառականները 330 Անգլ. ոսկի հանգանակելով զրկեր են պատրիարքարան, վանի կարօտեաններին համար:

—Նիշէն ալ Սերպիաքանակ հայ գաղթականներին կողմէն նոյն նպատակով 13 ոսկի զրկուեր է պատրիարքարան:

—Գրքէհիլի սակաւաթիւ և աղքատիկ հայերը 8 օսմ. ոսկի հաւաքելով իրենց մէջ, զրկեր են պատրիարքարան, վանի համար:

—Ձապիլ տօնին առթիվ 550 օսմ. ոսկի զրկուեր է պատրիարքարանէն վանի, Բալուի եւ Սեբաստիաի կարօտեաններին:

ՆՈՐ ԹԵՐԹ

Եգիպտոսի մէջ Տիար Սմբատ Բիւրատի խմբագրութեամբ «Փիւնիկ» անունով նոր թերթ մ'է սկսած հրատարակուել: Եգիպտոսի մէջ ցայսօր ծնած թերթերը շատ կարճ կեանք կրցած են ունենալ. արդե՞օք Փիւնիկ պիտի իրնայ շարունակել: Յուսանք:

Եկեղեցւոյ դպրոցական գոյքերն ու կարուածները մեծ մասամբ նուիրուած են անհատներու և ընկերութիւններու կողմէ, Հայ կղերին հըսկողութեան ներքե կրթուելիք աղոց յատկացուելու բացորոշ առաջադրութեամբ, և կը յարէ թէ Ռուսահայերը, սպօրէն գործ մը նկատելով այդ սեփականութեանց իրենց յատկացուած նպատակէն բոլորովին տարբեր պայմաններու մէջ գործածուած, խիստ ընդդիմութիւն ըրած են այս մասին (1):

ՌՈՒՍԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ

Թայմզ կը խօսի նաև տեղեկագրին այն մասին վրայ որ կը վերաբերի ռուսահայ մամուլին: էջմիածնի պաշտօնախօսքը (2), որ ցարդ կը հրատարակուէր կաթողիկոսին անձ-

(1) Հայոց դպրոցներին կայուածներ, որոնց արժէք քանի մը միլիոններ կ'անցնէր, արդէն գրաւուած են: Այս մասին վեհ. Հայրիկի դիմումները, ձմեռան ժամանակ մինչ ի Թիֆլիզ գնալու և իւր կողմէ նշելէ վր. Մուրատեանին Բեքերպուրկ զրկելը, բոլորովին ապարդիւն անցան. և միթէ՞ կարելի էր սպասել որ Հիւսիսայինի ձեռքէն ետ պիտի ստացուէին մի անգամ արդէն գրաւուածները:

(2) «Արարատ» ամսագիր: ՍՄԲ.

ԹՂԱՎՅՈՒԹԻՒՆԻՔ

26 Ապրիլ, Ռուսթըր.

ՏԻԳՐԻՍԻ մէջ «Հայ գաղթականութեան մէջ ճարակիլ սկսող ապականութիւնները» վերնագրով խմբագրականները կարգապահ: Յաւոք կուգամ յայտնել թէ Ռուսթըրի կարգ մը հայ երիտասարդներու մէջ ապականութիւնը այնչափ առաջացած է, որ նոյն իսկ փողոցներու մէջ՝ Հայ իգական սեռին համեստութիւնը վերադարձուրէր դիւային հաճոյքը զբաղում ըրած են:

Փողոցներու մէջ իրենց տեսած կնոջ կամ աղջկան հայ լեզուով լիբրու անպատկառ խօսքեր կուղղեն. շատ անգամ ալ, երբ հայ իգական սեռը իրենց քովէն կ'անցնի, այնպիսի անլուր և անամօթ խօսքեր կըսեն ինքնախօսութեան ձևով կամ իրարու ուղղելով, որ մենք զետէն զետէն կ'անցնինք, իրենց խօսիլը բաւական չը սեպելով, Այրիշ լակոսներու սորվեցուցած են անգլիերէնի հետ նոյնաձայն այնպիսի բառեր, որոնց հայ լեզուին մէջ գործածութիւնը համեստութեան բոլորովին հակառակ է և նողկանք կ'ազդէ: Երբեմն տնէն դուրս կ'ըլլենք, Այրիշ լակոսները երբ նշմարեն թէ Հայ ենք, առաջջիտ կ'ըլլեն ու բարձրաձայն կըսեն մեր ամօթխածութիւնը վերադարձուցէր:

Հայրենի երկրին մէջ թուրքերու զգուելի դէմքերը տեսնելու և անվայել խօսքերը լսելու դժբաղդութիւնն ունէինք, այս ազատ երկրին մէջ ալ թուրք սյրիկաներու գործը շարունակող Հայեր ունինք, եթէ այդ տեսակները հայ կրչել արժան է:

ՀԱՅՈՒՆԻ

ՅՈՒՐԻՍԸ 3 ԱՄԿԻԱ

Ձը գիտեմ ի՞նչ գրել մեր քիչ ուսը հայ գաղութի մասին, որուն ընկերական, ազգային և ընտանեկան կեանքին մէջ միութիւն արական բան գըտնելը դժուար է. ամեն օր զուտանքի նիւթեր պակաս շեն մեր կեանքին մէջ: Ի՞նչ ըսեմ. մեր երիտասարդներուն դէպի մոլորութիւն սանձարձակ արեւանքները գրեմ, թէ ճաշարանի ստոր մ'իջուրտին մէջ բաղդարաղով կեանքներին փճացնողները

նական և բացարձակ պատասխանատուութեան տակ հիմա ենթարկուած է Թիֆլիզի լրագրիւններուն յատուկ դրութեան, որովհետև ընդդիմացած էր դպրոցական նոր կարգադրութեանց և «Ձէր աշխատած, կըսէ տեղեկագիրը, ինչպէս խոստացուած էր, մերձեցում մը յառաջ բերելու Հայոց և Ռուսաց միջև»: Թիֆլիզի մէջ հայերէն լեզուով հրատարակուած պարբերական հրատարակութեանց գալով, կօլիցին իշխան կը յայտնէ թէ՛ փոխանակ աշխատելու որ Ռուսերն ու Հայերը ի ՄԻ ՁՈՒՂՈՒԻՆ, անոնց միջև բացուած վիճելու անգամ դադարեցուցելէ ետքը, վերջնապէս խափանուեցաւ՝ դիտողութիւններ հրատարակած ըլլալուն համար ռուս ուսուցիչ մը դէմ, որ Թիֆլիզի կիմնադրոնի մը մէջ հակառակութեան ոգի կը ներշնչէր աշակերտներու միջև: Միևնայն հակառուսական ոգին և փնտաւար ձգտումները կերևան նաև, կը յարէ տեղեկագիրը, այն թերթերուն մէջ որոնք կը հրատարակուէին Հայերու ձեռքով և ռուս լեզուով. հետեւաբար, կօլիցին իշխանը արտօնութիւն կը խնդրէ՝ Հայոց հրատարակած բոլոր հանդէս-

Ն Ե Ր Ի Ն Լ Ո Ւ Ե Ր

ՈՒՍԹԸՐԷՆ Պ. Բահմուր մեզ կը գրէ:

«Անցեալ շաբաթ երեկոյ «Արարատեան» դերասանական խումբը ներկայացուց Գրեյնի «Թորոս Լեոնի» ինպատակ շաբաթական Գրադարանին և Վանի սովետը:

Ձեռք գրեցին թէ Վանի սովետը աղէկաբար ձայնը Ուսթարանիկ Հայոց ազգած չէ՞ր, որ հանդիսականաց թիւը 100ը չէր անցնէր: Արդեւքը դեռ որոշ չէ՞, միայն ստոյգ գրեցի որ 10 տարի յատկացուած է սովետը:

\*\*\*

Կերակէ երեկոյին քաղաքիս Արմէնո — Ամբիբըն Հայ քաղաքացիական ակումբը ժողով մուտեցաւ ազգային ժողովարարին մէջ: Տօքթ. Երեսուցի խօսեց Արարատի Լինքընի գրեական յատկութիւններու մասին: Երկրորդ աստիճանին էր ակումբին կազմակերպիչ Պ. Մ. Թովհանէշեանը, որ բացատրեց Ակումբին նպատակը, որ է «Հայերը Ամերիկացոց և Ամերիկացիք Հայոց ծանօթացնել» և ակումբը այն սխալ միտք թէ Ուսթըրի հայերը պէտք է հողեր գնեն հող, որ կարենան կապուիլ այս երկրի հետ. և իւր անձը օրինակ տուաւ: Իսկ առաջին աստիճանի երկրորդ անգամ բեմը բարձրանալով ուրիշ դատապարտելի միտք մը յայտնեց, ըսելով թէ՛ մենք հող պէտք է ընդունուիլ ըլլանք, որովհետեւ Ուսթըրի հարուստները այս կուսակցութեան կը վերաբերին: Տխուր տպաւորութեան տակ մեկնեցանք ժողովէն:»

—ՍէթլԸՄԷՆ մեզ կը գրեն.— Տեղւոյս հայերն ալ զգացին մեր խեղճ անօթի որբերուն թշուառ վիճակը. մի քանի բարեխիտ անձինք ինպատակ որբերուն հաւաքեցին դրամագումար մը, որով կը գնեն օճառ, ծխախոտ ևն. ու կը ծախեն որբերու հաշուին: Տեղւոյս գրեթէ բոլոր հայերը ամսական 10—20ական սէնթ Որբախնամի անդամ գրուեցան: Կը խոտովանինք որ ՍէթլԸՄԷՆ հայերը ու զգացին իրենց այս պարտականութիւնը. կը յուսանք որ ուշ ալ պիտի դադարին այս ազնիւ գործունէութենէն:

—ԼՐՕԷՆՍԷՆ Պ. Մաթէ մեզ կը գրէ.— Տեղւոյս ազգ. Հոգաբարձութեան հրահրով Արթ. Տ. Մաշթոց

որուն նպատակն կողմասի Հայոց մէջ դաստիարակութիւն ծաւալել և նիւթապէս օգնել անոնց: Բայց, ըստ Կօլիցին իշխանին, այդ ընկերութիւնը զուտ տոհմային ըմբռնումով լուսաւորութիւն կը ծաւալէ: Անոր դերամիտքը յաճախ կը յատկանան՝ օտար երկրի մէջ հայեր դաստիարակելու, պարագայ մը որ հակառակ է ռուս կառավարութեան պետական սկզբունքներուն: Իշխան Կօլիցին կը յարէ. «Կը կարծեմ թէ այս Հայ ընկերութիւնները Արթ. Սէն Ձեռն ՎՍՍՍ. ՀՈՒԹԵՆՆԷՆ՝ իրենց աստիճանայտուիկ հանգամանքին համար»: Հուսկ ռուսին, սեղեկագիրը կ'առաջարկէ Ձարին, ջնջել Կօլիցասի այս բարեգործական ընկերութիւնները: Եթէ Հայերը ուզեն հանրային գթութեան և դաստիարակութեան վերաբերող բուն ռուսական նպատակները քաջալերել, կրնան ռուսական ընկերութիւններու մասնակցիլ, որոնք զերծ են պետական և կրօնական ձգտումներէ: — Այս մասին վրայ Ձարը մակագրած է. «ԽՆՍՄՈՎ ՊԵՏԻ Է ՆԿԱՏՈՂՈՒԹԵԱՆ ԱՌՆԵԼ»:

վարդապետ պատարագեց մայիս 7ին. երեկոյեան ալ Հրապարակային ժողով մը տեղի ունեցաւ. ուր խօսեցան Տ. Մաշթոց վարդապետ և Տիար Ս. Յովսէփեան. առաջին աստիճանի հայր սուրբը խիստ սրտառու յղարկեց Վանի սովետան զի հակառակ պատկերացումներէ ետք՝ կարգաց մեր հողերը Առաջնորդին շրջաբերականը և ՏԻԳՐԻՍԷՆ Վ. Շահէնի «Սիրտ չունինք» յօդուածը, որոնք խոր տպաւորութիւն ձգեցին ժողովականաց վրայ, և և հանգանակութեան ձեռնարկուելով՝ գոյացաւ ինպատակ Վանի սովետը 106 տղար և մասնախումբ մը ընտրուեցաւ, հանգանակութիւնը շարունակելու համար: Պէտք է նկատել որ սեղուոյս 3—400 հայերէն միայն հարկեր հոգի ներկայ կը գտնուէին ժողովին:

—ՊՐԱՅԹԷՆ կը գրեն.— Տեղւոյս Որբախնամ ընկերութեան հաշիւը տեսնուեցաւ, այս չորրորդ եւամսեայ հաշուի արդիւնքն էր 46 տղար 55 սէնթ:

—ԲԵՄՊՐԻՃԷՆ կը գրեն.— Տեղւոյս Որբախնամ եօթնեակն իր տարեկան հասոյթն եղած քսան հինգ տղարն զրկեց Կ. Պօլիս Պատրիարքարան:

—ՁԼՍԻԷՆ մեզ կը հաղորդեն որ հոն՝ Որբախնամ ընկերութիւն մը հաստատուած է և կը յուսացուի որ պիտի կրնան տարեկան շորս—հինգ որբ որդեգրել զանազան որբանոցներէ մէջ:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ՎԵՀԱԺՈՂՈՎԻՆ ԱՌԱՋԻՆ ԿԱՏԱԿԸ

Իտալական կառավարութիւնը որոշած է՝ երկար տեղէն իվեր իր Ձինաստանէն պահանջել նաւահանգիստ գրաւելու ճիշդ այն օրը, երբ Ձարին հրահրած խաղաղութեան վեհաժողովը պիտի բացուի: Եթէ իտալիոյ այս շատ տարօրինակ վարմունքը քաղաքական կատակ մը չէ՞, խաղաղութեան ժողովին ստիպեալ տեղի ճշմարիտ և գործնական ուղերձ մը չէր կրնար ըլլալ, ըսելու համար թէ՛ ինչ կ'արժէ մեր ժողով ընել և որոշումներ անցունելը, քանի որ մեր բնոյթները չենք կրնար փոխել. հոս ինչ դաշնագիր ալ որ կ'ընենք, մեզմէ ամեն մէկը երբ որ կրնայ, ինչպէս որ կրնայ ու ինչքան որ կըրնայ պիտի գրաւէ՛, պիտի յափշտակէ՛ ուրիշէն. հետեւաբար պատերազմի միշտ տեղի պիտի մնայ:

ՆՈՐ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

—Ձրոյց կայ որ Ռուսիա, իտալիա և Գաղղիա երկու դաշնակցութիւն մը պիտի կազմեն, այն լուրին վրայ թէ՛ Անգլիա և Միացեալ Նահանգները իրարու հետ դշնակցութիւնը կ'ընեն, սակայն երկու կողմէն կ'աշխատին ծածուկ պահել:

ՅՐԱՆՍՍՅԻ ՇՈՒԱՐՈՒՄԸ

Ռուսիոյ համաձայնութիւնով Անգլիական մասնաւոր ազգեցութեան տակ գտնուող Ձինական նահանգի մը մէջ՝ Գաղղիա կողմէ հանքային աստանձաւոր հումքեր ձեռք բերել, նպատակ ունենալով ասով փորձելու Ռուսիոյ դաշնակցութեան արժէքը, տեսնելու թէ՛ Ռուսիա՝ հակառակ իր Անգլիոյ հետ ունեցած համաձայնութեանը՝ պիտի պաշտպանէ Գաղղիոյ պահանջը իբր հաւատարիմ դաշնակցի, թէ՛ Անգլիոյ կողմէ մնալով՝ պիտի լքանէ զինքը: Գաղղիոյ պաշտօնական անձերէ շատերն կարծիքն այն է թէ՛ Ռուսիայ այլևս Գաղղիոյ դաշնակցութեան պէտքը չզգար, որովհետեւ նա Գաղղիայէն կ'ունակ առած՝ իւր շահերն ուզածին պէս կար-

գաղղեց Արևելքի և Մայրաքոյն Արևելքի գործերուն մէջ. նա տնտեսապէս կ'իջեց Գաղղիան և անոր վերջին կաթիլ կաթը առաւ. Ռուսիա ամեն ինչ շահեցաւ Գաղղիոյ երեսէն՝ ոչինչ չափեցուցելով Գաղղիոյ:

ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՍԵՂԱՆԻՆ ՎՐԱՅ

խաղաղութեան վեհաժողովին մասին ընդհանուր կարծիքն այն է թէ՛ երբեք չպիտի մտնէ պետութիւններու ներքին գործերուն: Սակայն վիճանայի պաշտօնական օրկանը կ'ըսէ թէ՛ ասոր հակառակը պիտի պատահի. կը վստահացունէ թէ՛ հոն՝ Պալքանեան խնդիրը պիտի յուզուի, թէ՛ Մակեդոնիոյ վերջին յեղափոխական շարժումները դադարեցան այս բանին գիտակցութիւնովը: Թէ՛ Մոնթենեկրոն երեքէն նուազ ներկայացուցիչներ չպիտի ունենայ վեհաժողովին մէջ, որոնք Ռուսիա իրենց կռակ ունենալով՝ Պալքանեան թեւրակը մասեր իրենց միացունելու խնդիր պիտի հանեն և այդ նպատակին համար Էսքի Հիսար և Ենէնի Պաղար սանձաքներէն հանրագրութիւններ պատրաստուած են, խաղաղութեան վեհաժողովին ներկայացուելու, խնդրելով որ իրենք Մոնթենեկրոյին հետ միանան:

—ԵՄՓԱՆ ԴՈՒՄԱՍԿՈՍ, մինչեւ

Պարսկաստանի սահմանը երկաթուղիները մեծ փութով կը շինուին, և այդ նպատակաւ մեծ սպաւարները եղեր են Միացեալ Նահանգաց երկաթի գործարաններուն:

ՁԷՆԸԿԵՑՈՒԹԻՒՆ ՁԵՆ ՈՒՁԵՐ

Միացեալ Նահանգներ և Անգլիա համաձայնած են խաղաղութեան ժողովին մէջ միասին դէմ կենալու սպառազինութեանց նուազեցումն առաջարկին՝ նկատելով թէ սպառազինութիւնը վաճառականութեան ոյժերն է, թէ՛ Միացեալ Նահանգները դեռ նոր իրենց մեծութեան և պէտքերուն համաձայն սպառազինուելու ընթացքին մէջ մտած են: Երկու պետութեանց ներկայացուցիչներն ալ պիտի պնդեն միջազգային միայուն իրաւարար մարմինի մը անհրաժեշտ պէտքերն վրայ:

ՄԻՀԻՐԱՆ ԽԱՐՔՈՒԹԻՒՆՆԵՐ M. Harpootlian, P. O. Box 470, Worcester Mass.

Մեր տան սեղանաւորական ճիւղը իր ձեռամբ դրամ զրկողներէն գնահատելի կերպով քաջալերեալ՝ պարտք կը սեպէ յայտարարել թէ՛ մենք ևս պէտք եղած զուտութիւնը չենք զըլացած գործին միշտ ապահով միջոցներ յառաջ բերել, որպէս կ'ապացուցանէ մեր անցեալ տարիներու գործունէութիւնը: Հայ ժողովրդեան և մասնաւորապէս մեր տան անձնօթներուն իրական վստահութիւն տալու համար պէտք է յիշել թէ՛ ՅԱՐՔՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՂԻՍԱՒԻ ԽԱՐՔՈՒԹԻՒՆՆԵՐ տան՝ երկրին մէջ ունեցած առաւել քան 10,000 Օսմ. ոսկւոյ անշարժ ստացումը իր սոյն փոխ. գրի գործոյն երաշխաւորութիւնն է, յայտ անոնց որոնք կողմն դրամներ վստահելի միջոցով զրկել: Ռուսի կը յուսանք թէ՛ Հայ հասարակութիւնը չպիտի վարանի իրեն ապահովագոյն միջոցը՝ մեր ձեռամբ զրկել իւր դրամը, որ կրնանք փոխանակաբար ալ խաղաղութեան ժողովարանի, Բիւրի, Բալուի, Բերբի, Մալաթիայի, Սեւաղի, Կ. Պօլսի, Նաև Տաւ. բոլոր քաղաքացի համար: (ինչ որամ զրկողներն ապահովագրութեան համար՝ Նշընը Պանքի չէք և կամ մընի օրտըր զրկելու են):

Հայրենիքի մէջ ո՛ր և է գործ տեսնելու կամ գործադրման օգնելու համար՝ պատրաստ եմ եղորս Յարութիւն էֆի. ձեռամբ կատարել տալ: Հեռագրով և նամակով դրամ և կամ նաւային թիքէթներ կրնամ զըրկել Մարտիկայ:

ԿՈՒՁՈՒԻ

Էճիփըն թրպալքօ քըմփընիէն սիկարէթ շինողներ կուզուին: Դիմել գործարանը, որ է 415 իսթ Պրօտուէյ:

ցոյց տամ. ատոնք ճշմարտութիւն են, բայց ուրիշ ատենի թողունք: Օրուան խնդիրը Տիկին Թօթօեանն է. ո՞վ է այս կին և ինչո՞ւ այս պատիկ գաղութը թունդ կ'աւճ՝ վերջաւորութեան մը կ'սպասուի:

Օր. Աննա Տօնապետեան Բայու ծնած, Բիւրի ապրած, շատ կանուխ ծնողազուրկ ըլլալէն ետք՝ բողոքովին անպաշտպան մնացած է: Մեր երկիրը որբերով չըլցուած ատեն՝ այս անհանկերտ վրայ ժողովուրդը աւելի կարեկից ու զթուս էր. չը գրեցինք որ բարեբարին ձեռքով այս աղջիկն ալ խաղաղութի Օրիորդաց Գօլէճը կը սարուի, ուրիշ շրջանաւարտ եղած Սեբաստիա կը դրուի՝ իբրև վարժուհի. հոն կ'ամուսնանայ Պօղոս Գէօզէանի հետ. ջարդերու ատեն կը նահատակուի Կօղոսն ալ, որուն մայրն ու եղբայրները Ամերիկայ կուգան՝ իրենց հետ բերելով այրի Աննան իր եկկուց գաւակներովը: Տարի մը ստալ այս կինը ամուսնացաւ Պօլուցի Սարգիս Թօթօեանի հետ, որ պարկեշտ և աշխատասէր մէկն է: Ամուսնանալէն քիչ ետք դժգոհութեան ձայնը լսուեցան. ոչ ոք կրցաւ արգաւորացնել կնոջ վարժուցը դէպի իւր էրիկը. պօքանք զգացինք Հայ կնոջ պատիւը արատաւորող այս կընդիպէն... Բանի մը օր առաջ Տիկին Թօթօեան իր նորածին աղջիկը ձգելով նիւ Ենթը գնաց, ուր չը գրեցինք թէ ինչ կեանք կ'անցնէ: Մեր ընտանեկան նախանձելի կեանքին յիշատակներովն էր միայն որ միտքարութիւն կ'զգայինք այս օտարութեան մէջ. ըսէ՛ք, կ'աղաչեմ, ո՞ր կը մնայ Հայ կնոջ հանած անունը՝ իբր անաչէն և գթոտ դէպի իր գաւակները... Կ'ընդունիմ թէ Աննա մը ամբողջ Հայ կնոջը շինակցացներ. բայց եթէ Գօլէճի շրջանաւարտ (?!!) մը իր բարոյական (°) բարձրութեան մակարդակը ցոյց կուտայ ամենուն իր զգուշելի կեանքով, ինչ կրնայ խորհիլ ինքզինք գիտցող Հայ երիտասարդը, ինչ կը խորհին օտարները: Որչափ իրերի և պաշտելի են մեր տգէտ աղջիկները քան այս անսակ զարգացած սեպուսանները. զարգացում չէ՛ անչուշտ, անէճք մ'է որ երբեմն կուգայ մեր գլխին, ուրիշներուն քով մեր ընտանեկան կեանքի արբութեան վրայ քօղ մը քաշելու:

նրն ու լրագիրներն, ինչ լեզուով ալ ըլլան, մասնաւոր դրութեան մը ենթարկել իր անձնական հսկողութեան տակ: Այս եղանակով, Հայ օրագրողները պիտի հարկադրուին մընալու ռուսական որոշ ծրագրի մը սահմանին մէջ, որ յատկապէս իրենց համար պիտի պատրաստուի Թիֆլիզի ընդհ. կառավարչին գիւսանին կողմէ: ԲԱՐԵՎՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ Կօլիցին իշխան իր սեղեկագիրին մէջ կը քննադատէ նաև Կօլիցասի բոլոր Հայ բարեգործական ընկերութիւնները: Ձանազան մասնաւոր օրէնքներ հաստատուած են արդէն այս ընկերութեանց վրայ կառավարական հսկողութիւնը ապահովելու համար. ինչպէս նաև պաշտօնական քօնքօլ մը անոնց գործողութեանց և հաշիւներուն վրայ. նոյնպէս Կօլիցասի սեղանին իշխանութիւնները իրաւունք ստացած են լինելու զանեղ՝ երբ ամենամիտքը շեղում մը ունենան իրենց կանոնադրութիւններէն: Բայց բոլոր այս միջոցները մեծ օգտակարութիւն ունեցած չեն: Կօլիցասի գրեթէ բոլոր քաղաքները ունին մասնաժողովներ այս ընկերութիւններէն մէկուն (Բարեգործական Ընկ.) ստորադասեալ, որուն կեդրոնատեղին է Թիֆլիզ և

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

Անթել Հեռուգործ 2,700 մղոն հեռավորութեամբ հեռագրել յաջողուած է:

ԱՆԳ. ՆԱԻԵՐԸ

Աշխարհի նաւերուն կէսը Անգլիական են, որոց լաւագոյնները կըրնան մարտանաւերու վերածուիլ 48 ժամէն:

ՔԱՐԷ ԲՈՒՐԻ

Կրթարէն ձիւնի պէս ճերմակ բուրդ կը շինուի: Գիւտը պատահմամբ գտնուած է: Երաքարով զբաղուող մէկը յանկարծ տեսեր է որ կրթարը լուծուելով լավայի վերածուեր է. երբ փորձեր է անոր հետ ուրիշ քիմիական նիւթ մը խառնել, հարած ապակիի փոխուեր է, և երբ ուրիշ քիմիական նիւթ մըն ալ է աւելցուցեր՝ ստացեր է ճիշդ և ճիշդ ճերմակ բուրդ: Այս քարէ բուրդ շատ ածան կ'ըլլայ, կրակը չայրեր զանի և անկէ ջուր չանցնիր:

Չ Ո Ւ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

Գտնուորը բանտարկեալին կը հարցունէ.

—Ի՞նչ ես պաշտպանեալը:

—Ո՛չ, իմ փաստարանս է որ զիս պիտի պաշտպանէ. ես գողութիւն ըրողն եմ:

Ծեր ձի մը ծախու կը տարուի ծեր տիկնոջ մը: Տիկնոջ կը հարցնէ.

—Քանի՞ տարեկան է այդ ձին:

—Տիկնո՛ւ, շատ երիտասարդ է, կը պատասխանէ տէրը, հազիւ քու տարիքդ կայ, 23 տարեկան է:

Տիկնոջ գոհ էր: Ձինը ծախուեցաւ:

Ուսուցիչ Տէրտէր մը իւրայեւացիներուն կարմիր ծովէն անցնելը և եգիպտացիներուն ծովին յատակը իջնելը բացատրելու համար կըսէ.

—Ծովը սաւած էր՝ երբ իւրայեւացիք անոր վրայէն անցան, ու հալեցաւ՝ երբոր եգիպտացիք անոր վրայ ելան:

Աշակերտներէն մին առարկելով կ'ըսէ.

—Կարմիր ծովը աշխարհացոյցին մէջ՝ այրեցեալ գոտիին վրայ կը բռնուի, հոն ջուրերը երբէք չեն կըրնար սառիլ:

Տէրտէրը.—Մօ տղայ, գիտնալու ես որ այն ատենը աշխարհացոյց չի կար:

ԿԱՐԵՆՈՐ ԱՋԻ

Վաղը Ս. Ոսկերեան Կեղեցոյ մէջ ժամերգութեան պաշտամունք պիտի կատարուի և Արժ. Խաչ վարդապետ պիտի քարոզէ՝ նիւթ ունենալով «Ուր ժողովեցնին երկու կամ երեք՝ յանուն իմ, անդ եմ և ես ի մէջ նոցա»:

և պիտի բացատրէ թէ ինչո՞ւ և ինչպէ՞ս եկեղեցի պէտք է երթալ:

ԿՈՒՉՈՒԻ

Անգլիարէն գիտցող տղայ մը կ'ուզուի Ֆիլադելֆիա նաւարանին մէջ՝ թէ լաւ կեղ շարժական մը առնելու եւ թէ արհեստ որովելու:

Իմեւ Տի Գրիֆի Սիմաքութեան:

ԱՋԻ

42րդ փողոցի Ս. Բարթողիմէոս եկեղեցոյ մէջ նախապէս կազմուած Հայկազեան Կաճառը տեղափոխուած և աւելի հաստատ հիմերու վրայ վերակազմուած ըլլալով՝ իւր մարզութիւնները կը շարունակէ ի թիւ 498 3րդ Ալեքի 33 և 34րդ փողոցի մէջտեղ, վերին յարկ, ամեն Ուրբաթ փրկուաններ ժամը 8էն 10ը:

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԻՏԱ ԱՋԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ

Տարեկան բաժանորդագրին է 2 տողար. վեցամսեայ՝ 1 տողար:

Նոր կեանքի նիւ Երբքի գործակալն է Պրն. Անտոն Թազուրեան, և հասցէն՝

343 Իսթ 34րդ Փողոց:

Նոր կեանքի բաժանորդներուն «Մարտ» ձրի կը զրկուի:

Լօնտոնի գործակալութեան հասցէն է՝

L. Frank,

309 Ladbroke Grove London W,

ՍՕՅԼԵԱՆ ԵՒ ԱՌԱՔԵԼԵԱՆ Պղնձագործ

441 Ուէսթ 26րդ Փողոց, Նիւ Եորք

Ուէսթ 26րդ Փողոց, Նիւ Եորք

Այս գործարանին մէջ կը շինենք գեղեցիկ պղնձեղէն անօթներ, սեղանատան, խոհանոցի և տանմէջ գործածելի ամեն տեսակ կարասիները

Նաեւ հիները կը նորոգենք եւ կը կրկնենք (խալայ): Թիւրքիայէն և Պարսկաստանէն բերուած հնութիւններու իրական նմանութիւնը կը շինենք: Տրուած ապսպրանքները կը կատարենք ամենայն ճշգրտութեամբ

Մեր գէները խիստ չափաւոր են:

Ա. Ջ. Դ

Massachusetts Fuel Co. ի մէջ ունեցած բաժիններէս հինգը խիստ ըստ արկողական պէտքեր մը համար կը ծախեմ. բաժինը 50 տողար է, Գործը շահաւոր և ապահովութիւնը քոր փութելուով հաստատ է: Իրենց դըրամը արէկ շահով և ապահով կիր պով գործածել ուզողներուն համար հազուադէպ պատահութիւն մի է:

Գիմեւ՝

K. E. Avakian

70 Winter St, Worcester Mass.

Ս. ՏԱՄՊՈՒՐԱՋԵԱՆ ԵՊԱՐԱՎԱՋԱՌ

509 2րդ Ալեքի, 28 և 29րդ Փողոց:

Եօթը տարիներէ ի վեր հաստատած իստուով իս մէջ գտած յաջողութիւնով կարող եմ շատ լաւ ապրանքներ տալ շատ ածան գնով՝ համոզուած ըլլալով թէ՛՝ ապահով շահին գլխաւոր միջոցն է յաճախորդը գոհ ընել: Եթէ մեր ապրանքները գոհացուցիչ չըլլան՝ վճարուած դըրամը ետ կը դարձունենք: Մեր քով կը գտնուին ամեն տեսակ բանջարեղէններ, պտուղներ ու կերակուրի վերաբերեալ տեղական կամ Արեւելեան ամեն կարգի նիւթեր, թիթեղեայ տուփերով կամ առանց տուփի: Մեր գներու մասին հետեւեալ նմոյշները կուտանք: Պուլըուր փառուտը 4 սէնթ. 25 փառուտին աւելի գնողին համար 3 1/2 սէնթ: Մեծած փառուտը 4 սէնթ, գէյթուն՝ 10 սէնթ, 10 փառուտին աւելի գնողին համար 9 սէնթ: Մաքուր ալլուրի հացին մէկը 3 և երկուքը 5 սէնթ: Կաթ քորթը 3 սէնթ: Հայկական գէյթունի իւղ, կորկոս, կանանչ գէյթուն, պամնայ, ֆլաւոր, լէպլէպի, Այնթէպ հալվասի ևն. կը վաճառենք. մեծ քանակութեամբ գնողներուն կարեւոր գեղը ընելով:

Նամակով յանձնարարութեան համար գիմեւ վերայիցեալ հասցէին:

The Equitable Life Ins. Society of the U. S.

«Էքուիթալ»

Աշխարհի հզօրագոյն և լաւագոյն կենաց Ապահովագրական Հնկերութիւնը:

Ամեն հասակի և վիճակի տէր անձանց համար ապահովագրեր կը տայ, ի դէպ մահու կամ 12—50—25 տարիէն վճարելի՝ եթէ ուզուի:

Օտար երկիրներէ կամ ներսի նահանգներէն փախաբողք կրնան դիւրաւ թղթակցութեամբ ինքզինքնին ապահովագրել տալ:

Հրդեհէի դէմ ևս կ'ապահովագրեմ:

(Գործակալ)

ԿԱՐԱՊԵՏ ՊԻՒՐԻՆՅԱՆ

164 E. 27th St. New York

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՍՐԻՆԳ



ԿԱՄ ԱՋԳԱՅԻՆ ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

Նիւ Եորք, 1899

Հատոր Ա.

Կը պարունակէ 256 երեսներ և 16 գեղեցիկ պատկերներ: Տպուած է խիստ ընտիր թղթի վրայ և փառաւոր կերպիւ կազմուած:

Գիներն են. թղթակազմ (առանց պատկերի) 50 Սէնթ. թղթակազմ՝ 65 սէնթ. լաթակազմ՝ 75 սէնթ. փառակազմ՝ մէկ տողար: Գիներն կանխիկ են:

Մեծ քանակութեամբ գնողներու համար մասնաւոր գնով կայ:

Գրել, կամ դրամ զրկել առ՝

H. Eguinian,

1168 I St, Fresno, Cal.


Կամ

M. T. Fourounjian, 282 Jay St, Brooklyn, New York

Նիւ Ինկլենտ նահանգներուն համար ընդհանուր գործակալ՝ Ն. Թաթէտեան,

404 Fountain St, Providence R. I.

Մ. ԹԱՇՃԵԱՆ ԿԸ ՎԱՋԱՌԷ



Փառակազմը 1.00, լաթակազմ՝ 75, թղթակազմ՝ 65 սէնթ և թղթակազմ (առանց պատկերի) 50 սէնթ:

Մեծ քանակութեամբ գնողներու համար կը գեղջուի:

Կը վաճառէ նաև Բաֆֆի գրքերը սովորական գներով: Գիմեւ յիշեալ հասցէին:

261 William St, New York

Ուսթրի Հայերը կրնան «Սրինգ» գնել նաև Պրն. Գրիգոր Մարգարեանէ՝

167 Summer St,

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՐ ՆՊԱՐԱՎԱՋԱՌԱՍՈՒՆ Ա. ԳԵՐԱԸՋԵԳԵԱՆԻ

Թիւ 313 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք

Պատիւ ունի ծանուցանել թէ սա խանութը բացուեցաւ շաբթուս մէջ՝ տեղական և արեւելեան ամէն տեսակ նպարեղէններով: Ապրանաց թարմ լինելն ու գներու չափաւորութիւնը ծանուցանելու համար կը հրաւիրուին Հայերն գէթ միանգամ փորձել. մէկ փորձը բաւական է յաճախորդը մըռտնջեանական ընելու:

Մէկ գին, ածան գին. քիչ շահ, շատ առևտուր: Սա է մեր նշանաբան:

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՋԻ ԴԵՂ



Կը գորացնէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը դադարեցնէ: Կը բուժէ նաև մորթի հիւանդութիւնն ու կը մաքրէ թեփերը: Միանգամ փորձել բաւական է սա զեղին արժէքը դիտնալու համար, որ արեւելեան խոտերէ պատրաստուած է յոյժ հաճելի մի հոտով: Կը ծախուի բոլոր գեղագործներուն քով: Գին 50 Սէնթ միայն:

Կը վաճառուի նաև Տ. Յ. Բարակեանի քով, թիւ 45 Բարսէլէն ըսթրիթ, Ուսթըր, Մասս:

Ա. Բ. Ս. Հ. Ա. Մ. Ս. Ա. Հ. Ա. Ս. Ի

Արտածիչ և ներածիչ Արեւելեան ամեն տեսակ ըմպելիաց եւ զանազան նպարեղինաց:



Թիւ 92 Ուաշինկթըն փողոց և 23 Բէքթըր փողոց, Նիւ Եորք:

Խմելը միասակար է թէ և, բայց գուտն ու մաքուրը գործածելը օգտակար է:


Խմէ, գինի, օշի բայց քիչ, եւ մաքուրը, զուտը կամ հիշ:

Իմ Արեւելէք բերել տուած օղին ու մասթիքան չի կրնար գերազանցուիլ, զի մեր յատուկ գործարանի մէջ պատրաստուած է՝ եղբորս անմիջական հսկողութեան տակ: Իմ հին ու նոր գինիներ կրնան գոհ ընել ամեն ոք:

Նպարեղէններու մէջ առաջնակարգ տեղ մը կը զբաղէ իմ վաճառատուն: Իմ ներածիչ տուած ապրանքներս սակաւ կը հասնին Արեւելէք եւ կը վաճառուին շուտով: Ունիմ ամեն տեսակ արեւելեան նպարեղէններ շաբարեղէններ, զէյթուն, ձիթաւիղ, նէրկիլէ և անոր յարակից պարագաները, թրքական ծխախոտ, սիկըրէթ ևն. ևն. Ոչ միայն մեր ապրանքներն ընտիր են, այլ գներն համեմատաբար դիւրամաշէլի են ամեն դասակարգի անձանց համար:

Մեր գրից ու անկղծութեան վրայ գաղափար առնել ուզող նոր յաճախորդներուն՝ կրնանք ծանօթ հայերէ վկայութիւններ դրկել:

Յանձնարարութիւնը դուրսի քաղաքներէ ճշգրի կը կատարուին: Ամեն հրամանի հետ գնոյն գէթ մէկ տասներորդ մասը դրկուելու է կանխիկ, իսկ մնացեալը Սի. Օ. Տի:



Պերլինի համալսարանէն վկայեալ՝ Տեթր. Էֆիլ պատրաստ է ամենազժուարթին մասնաւորապէս գողտիկ կոշուած արտերը բժշկելու: Կատարելապէս չըրժելուող հիւանդին դըրամը ետ կը արուի: Շատ մը Հայեր մեծ գոհացում գտեր են իրմէ: Հայոց համար վճարները շատ չափաւոր են: Օֆիսը 503 Երդ Ալքընրի 42րդ փողոցի անկիւնն է: Առաւօտեան ժամը 9էն իրիկուան 5-ը, իսկ կիրակիները՝ 9—12 օֆիսը կը գըտնուի:

ՄԱՍՈՒ ԳՐԻՆԻ

Լրագրոյս իմբազրութիւնն վեներտիկ Միթթարեանց Տպարանին Հկտ մասնաւոր կարգադրութիւն մը բրած է՝ նոյն տպարանէն ի լոյս ընծայուած գրքերէն Ամերիկայի Հայոց վաճառութեան համար:

Ո՛ւ է գիրք ստանալ փախաբողները կրնան գիմեւ մեզ անձամբ կամ նամակաւ: